ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 230

*28 նոյեմբեր 2011թ.*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. վարչական բյուջեում փոփոխություն կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
6. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
7. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
8. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան

9. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

10. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

11. Դիլիջանի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունը Դիլիջանի քաղաքային համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

12. Գույքը հաշվեկշռից հաշվեկշիռ փոխանցելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

13. Գույքը հաշվեկշռից հաշվեկշիռ փոխանցելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

14. Գույքը Դիլիջանի քաղաքային համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

15. Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

16. Գույքի օտարման մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

17. Գույքի օտարման մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

18. Գույքի օտարման մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

19. Դիլիջանի Շահումյան փողոցի թիվ 3Ա/10 հասցեի ավտոտնակը և վերջինիս սպասարկման 32,7քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

20. Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 94/2 հասցեի 167,0 քմ և Հակոբջանյան փողոցի թիվ 94/3 հասցեի 190,0քմ հողամասերն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

21. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «բնակավայրերի հողերից» 3226,9քմ ընդհանուր մակերեսով թվով 8 հողամասերը աճուրդի և 22,4 քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

22. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «բնակավայրերի հողերից» 584,0 քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

23. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից ֆինանսավորում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 231

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքին 2011թ, Հայաստանի Հանրապետության պետական միջոցներով ֆինանսավորվող ամենամյա ծրագրում ընդգրկված կենդանիների, կենդանիների և մարդկանց ընդհանուր ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ հակաանասնահամաճարակային միջոցառումները կազմակերպելու նպատակով հատկացվել է գումար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թվականի վարչական բյուջեի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» եկամուտներն ավելացնել 600.0 հազ.դրամ
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011 թվականի վարչական բյուջեի «Գյուղատնտեսություն» (բաժին 4խումբ 2 դաս 1) ծախսերն ավելացնել 600.0 հազ.դրամ, որից՝

1) հոդված 4111 –480.0 հազ.դրամ
2) հոդված 4131 – 120.0 հազ.դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 232

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՊԾ-ի «Սնունդ Աշխատանքի Դիմաց» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքների միության կողմից հաստատվել և ներկայացվել է ծրագիր , որի շրջանակներում պետք է կատարվի «Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման աշխատանքները: Դիլիջանի քաղաքային համայնքի ներդրումը նշված ծրագրին պետք է կազմի 988600 դրամ ՝ նյութերի տեսքով:

Համայնքի մասնակցությունը ծրագրին ապահովելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել ծրագրով նշված շինարարական նյութերի գնում: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման» ծրագրին համայնքի ներդրումն ապահովելու նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Նախադպրոցական կրթություն»/բաժին 9 , խումբ 1, դաս 1, հոդված 5113/ հատկացնել 988600 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՏՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 233

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի Մյասնիկյան 55 հասցեի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ:
Շենքի վերանորոգման աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել պահանջվող լրացուցիչ աշխատանքների գնումը:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջանի քաղաքապետարանի Մյասնիկյան 55 հասցեի վարչական շենքի վերանորոգման լրացուցիչ աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում»/բաժին 1, խումբ 1, դաս 1, հոդված 5113/ հատկացնել 6910200 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱՄՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 234

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2011թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հատկացում: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել

- «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում»/բաժին 01 , խումբ 01, դաս 01/
  Հոդված 4214-600.0հազ.դրամ
  Հոդված 4239 - 15.0հազ.դրամ
- «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ»/բաժին 01 , խումբ 06, դաս 01/ հոդված 4234-600.0հազ.դրամ
- «Քաղաքացիական պաշտպանություն» /բաժին 02, խումբ 02, դաս 01/ հոդված 4269 – 75.0 հազ.դրամ
- «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» /բաժին 09 խումբ 06 դաս 01/ հոդված 4269 - 849,0 դրամ
- «Սոցիալական հատուկ արտոնություններ»/բաժին 10, խումբ 07, դաս 01/ հոդված 4269 - 72,0 դրամ:

Հաստատում եմ
Դիլիջանի քաղաքապետ
________ Ա. Սանթրոսյան
«24» ________ 11 ________ 2011թ.

# ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովա փողոցի թիվ 121, 106 և 108 տների հարակից համայնքային նշանակության ճանապարհի ներքին հատվածի փլված հենապատի վերակառուցման աշխատանքների

| Հ/Հ | Նյութերի և աշխատանքների անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը /դրամ/ | Ընդհանուրի գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հողային աշխատանքներ ձեռքով:Փլված հենապատի տեղի նախապատրաստում | խ.մ | 11.5 | 5000 | 57500 |
| 2 | Բետոնային աշխատանքներ | խ.մ | 15 | 40000 | 600000 |
| 3 | Հենապատի հետևի հատվածում հողի հետ լիցք | խ.մ | 5 | 2500 | 12500 |
| 4 | Ավելացած հողի և առաջացած շինաղբի բարձում ձեռքով և տեղափոխում 7կմ հեռ. վրա | խ.մ | 6 | 5000 | 30000 |
| 5 | Ծռված, խախտված մետաղյա ցանկապատի վերամոնտաժում | գծ.մ | 20 | 500 | 10000 |
| | **Ընդամենը** | | | | **710000** |
| | Վերադիր ծախսեր 5% | | | | 35500 |
| | **Ընդամենը** | | | | **745500** |
| | Շահույթ 10% | | | | 74550 |
| | **Ընդամենը** | | | | **820050** |
| | ԱԱՀ 20% | | | | 164010 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **984060** |

Դիլիջան քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի
գլխավոր մասնագետ Ս. Մանթաշյան

Դիլիջան քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի
առաջատար մասնագետ Ա. Ժամհարյան

«24» ________ 11 ________ 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 235

---

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Դիլիջան քաղաքից 2011թ. աշնանային զորակոչով Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում ծառայության մեկնող թվով 50 զորակոչիկների համար նվերներ ձեռք բերել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և զորակոչիկների համար նվերների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից «Քաղաքացիական պաշտպանություն» /բաժին 02, խումբ 02, դաս 01, հոդված 4269/ հատկացնել 75000 դրամ :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ԿԱՐԴԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ N 236

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Սայաթ – Նովա փողոցի բնակիչները խնդրանքով վերակառուցելու Սայաթ – Նովա ներհամայնքային նշանակության փողոցի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ներքին հատվածի խարխլված և մասամբ փլված հենապատը /մասնավորապես թիվ 121, թիվ 106 և թիվ 108 հասցեների տներին հարակից հատված/:
Ուսումնասիրությունից պարզվել է , որ նշված հենապատը տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, փլվածքները լցվել են փողոց, ինչը խոչընդոտ է առաջացնում ավտոտրանսպորտի և հետիոտնի անվտանգ երթևեկության համար:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում նշված վթարը վերացնելու նպատակով կատարել հենապատի վերակառուցման աշխատանքներ:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Սայաթ – Նովա փողոցի թիվ 121, թիվ 106 և թիվ 108 հասցեների տներին հարակից համայնքային նշանակության ճանապարհի ներքին հատվածի փլված հենապատի վերակառուցում» աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04, խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 984060 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 237

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպություն հաճախող սահմանափակ կարողություններով թվով 48 երեխաների համար ձեռք բերել նվերներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և սահմանափակ կարողություններով երեխաների նվերների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից «Սոցիալական հատուկ արտոնություններ»/բաժին 10, խումբ 07, դաս 01, հոդված 4269/ հատկացնել 72000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱՄՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ N 238**

---

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Շամախյան թաղամասի բնակիչները խնդրանքով վերանորոգելու Շամախյան թաղամասի ակումբի շրջակայքի ավտոտրանսպորտի երթևեկելի մասը:
Ուսումնասիրությունից պարզվել է , որ քաղաքի նշված հատվածը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունից ենթարկվել է ֆիզիկական մաշվածության , առաջացել են խորը փոսեր, ինչը ճանապարհահատվածը դարձրել է գրեթե անանցանելի ավտոտրանսպորտի և հետիոտնի համար:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել սեղմ ժամկետներում կազմակերպել փողոցի խճապատման աշխատանքների գնումը,:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Շամախյան թաղամասի Վախթանգ Անանյան և Այգեստան փողոցը միացնող և ակումբի շենքից մինչև Վախթանգ Անանյան փողոցին միացնող հատվածների ավտոտրանսպորտի երթևեկելի մասի խճապատում
աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04, խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 3915376 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 239

---

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել քաղաքի Սայաթ – Նովա , Մյասնիկյան և Վասիլև փողոցների բնակիչները խնդրանքով վերակառուցելու Վասիլև փողոցի , Մյասնիկյան և Սայաթ – Նովա փողոցները իրար միացնող հետիոտնի ճանապարհի փողոցային լուսավորության ցանցը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել վերանորոգել քաղաքի վերը նշված հատվածների փողոցային լուսավորության ցանցը:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Վասիլև փողոցի , Մյասնիկյան և Սայաթ – Նովա փողոցները իրար միացնող հետիոտնի ճանապարհի փողոցային լուսավորության ցանցի վերականգնում» աշխատանքների գնման համար Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Փողոցների լուսավորում» /բաժին 6, խումբ 4, դաս 1, հոդված 51!3/ հատկացնել 367366 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 240

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Մյասնիկյան փողոցի և Հակոբջանյան 3-րդ նրբանցքի հատման հատվածից , Շահումյան փողոցով մինչև Գայի փողոցի վերջնահատվածում գտնվող շրջադարձն ընկած ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգում» աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ:
Նշված աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար անհրաժեշտ է օրենսդրության պահանջներով կատարել վերը նշված պահանջվող լրացուցիչ աշխատանքների գնումը:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Մյասնիկյան փողոցի և Հակոբջանյան 3-րդ նրբանցքի հատման հատվածից , Շահումյան փողոցով մինչև Գայի փողոցի վերջնահատվածում գտնվող շրջադարձն ընկած ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04, խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 11609520 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 241

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի Կալինինի փողոցի թիվ 183 հասցեի շենքի հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 113-128 ծածկագրով հողում քաղ. Նաիրա Ասատրյանի կողմից կառուցվել է ինքնակամ շինություն ավտոտնակ՝ 24.0քմ մակերեսով :
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով ՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Դիլիջանի քաղաքային համայնքի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով ընդգրկել.

· Դիլիջանի քաղաքային համայնքի Կալինինի փողոցի թիվ 183 հասցեի շենքի հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 113-128 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն- ավտոտնակ՝ 24.0քմ - 40800 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 242

*28 նոյեմբեր 2011թ.*

ԳՈՒՅՔԸ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ՀԱՇՎԵԿՇԻՌ
ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքային պայմանները բարելավելու նպատակով 2007թ, Դիլիջան քաղաքային համայնքի կողմից ձեռք է բերվել ք.Դիլիջան Կամո 42 հասցեի շենքը, որը փաստացի տնօրինվում է համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից, սակայն մինչ օրս գտնվում է Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել նշված շենքը հանձնել համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը և հանել Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկից:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ք.Դիլիջան, Կամո 42 հասցեի 33462700 դրամ սկզբնական արժեքով շենքը հաշվեկշռից հաշվեկշիռ փոխանցել «Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ N 243

*28 նոյեմբեր 2011թ.*

ԳՈՒՅՔԸ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ՀԱՇՎԵԿՇԻՌ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջան քաղաքի երկրագիտական թագարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ք.Դիլիջան Մյասնիկյան 28 հասցեի նոր շենքը կառուցվել է 2010թ, ինչպես նաև շենքի տարածքի բարեկարգման նպատակով ձեռք են բերվել թվով 5 հատ քանդակային էլեմենտ, թվով 125 հատ լուսամփոփներ և լուսարձակներ , արձանների տակ լուսարձակներ և ցուցանակ , որոնք փաստացի տնօրինվում է համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից, սակայն մինչ օրս գտնվում են Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում:

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Մյասնիկյան 28 հասցեի շենքը հանձնել «Դիլիջան քաղաքի երկրագիտական թագարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը և հանել Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ գույքը իրենց սկզբնական արժեքներով հաշվեկշռից հաշվեկշիռ փոխանցել «Դիլիջան քաղաքի երկրագիտական թագարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, այդ թվում

- ք.Դիլիջան, Մյասնիկյան 28 հասցեի շենք – 236413791 դրամ
- թվով 5 հատ քանդակային էլեմենտ – 9500000 դրամ
- երկրագիտական թանգարանի թվով 125 հատ լուսամփոփներ և լուսարձակներ – 3432000 դրամ
- երկրագիտական թանգարանի թվով 4 հատ արձանների տակ լուսարձակներ – 264000 դրամ
- երկրագիտական թանգարանի թվով 1 հատ ցուցանակ – 277200 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 244

*28 նոյեմբեր 2011թ.*

ԳՈՒՅՔԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ
ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել մի խումբ բարերարների կողմից քաղաքին նվիրաբերած և Դիլիջանի քաղաքային լճի շրջակայքում տեղադրած «Միմինո» հուշարձանը ընդգրկել Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Միմինո» հուշարձանը ընդգրկել Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում և հաշվառել առանց արժեքի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը պատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 245

*28 նոյեմբեր 2011թ.*

# ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել Կալինինի 4 նրբ.7/1 հասցեի բնակիչ Մերուժան Եսայանը սեփականության իրավունքով իրեն պատկանող շինության 1998-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 5639 դրամ զիջելու խնդրանքով, Մյասնիկյան 147 հասցեի բնակիչ Հակոբ Գյուլզատյանը իրեն պատկանող շինության 2008-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 8425 դրամ զիջելու խնդրանքով , Մարինա Սարգսյանը իրեն պատկանող շինության 1998-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 190000 դրամ զիջելու խնդրանքով և Շամախյան 2 ք. 19 հասցեի բնակիչ Արտակ Ղուկասյանը, իրեն պատկանող ՎԱԶ 2107 մակնիշի 57SL 101 պետհամարանիշի փոխադրամիջոցի 2009-2011թթ ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 6069 դրամ զիջելու խնդրանքով :

ՈՒսումնասիրությունից պարզվել է, որ քաղաքացիները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում և մուծել են գոյացած ապառքի գումարների զգալի մասը:

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Գույքահարկի գծով սահմանել արտոնություն՝

1. Դիլիջան քաղաքի Կալինինի 4 նրբ.7/1 հասցեի բնակիչ Մերուժան Եսայանին պատկանող շինության 1998-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 5639 դրամ
2. Դիլիջան քաղաքի Մյասնիկյան 147 հասցեի բնակիչ Հակոբ Գյուլզատյանին պատկանող շինության 2008-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 8425 դրամ
3. Մարինա Սարգսյանին պատկանող շինության 1998-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 190000 դրամ
4. Դիլիջան քաղաքի Շամախյան 2 ք. 19 հասցեի բնակիչ Արտակ Ղուկասյանին

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 246

*28 նոյեմբեր 2011թ.*

## ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Մոլդովական փողոցի թիվ 5 շենքի թիվ 19 բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 -րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող Մոլդովական 5 շենքի թիվ 19 երկու սենյականոց՝61.3 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով 91950 դրամով(մեկ քառ.մետրի համար սահմանելով 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը պատրաստեց՝*
ԵՂԻՇԵ ԱՎԱԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ N 247**

---

*28 նոյեմբեր 2011թ.*

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Թբիլիսյան խճուղու 12 շենքի թիվ 8 բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 -րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող Թբիլիսյան խճուղու 12 շենքի թիվ 8, երկու սենյականոց, 73.5ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով 110250 դրամով(մեկ քառ.մետրի համար սահմանելով 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐ[illegible]
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԵՂԻՇԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 248

*28 նոյեմբեր 2011թ.*

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Մոլդովական փողոցի թիվ 5 շենքի թիվ 13 բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 -րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող Մոլդովական 5 շենքի թիվ 13, երեք սենյականոց՝ 82.7ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ուղղակի վաճառքի ձևով 124050 դրամով(մեկ քառ.մետրի համար սահմանելով 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -5　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՇՈՏ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*　　　　*Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԵՂԻՇԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 249

*28 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3Ա/10 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 32.7ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Սուսաննա Գրիգորյանի կողմից Շահումյան փողոցի թիվ 3ա/10 հասցեում ինքնակամ կառուցված 32.7քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/ ճանաչվել է համայնքի սեփականություն և ընդգրկվել համայնքի հաշվեկշռում:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հոկտեմբերի 1-ի թիվ 531 որոշմամբ նշված ինքնակամ կառուցված ավտոտնակը ճանաչվել է օրինական: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, վերոհիշյալ 32.7քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 32.7քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Սուսաննա Գրիգորյանին, համապատասխանաբար, 42 510 դրամ և 40 614 դրամ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Շահումյան փողոցի թիվ 3ա/10 հասցեում գտնվող 32.7քմ մակերեսով ավտոտնակը և վերջինիս սպասարկման 32.7քմ հողամասը, համապատասխանաբար, 42510 դրամ և 40614 դրամ արժեքներով, քաղ. Սուսաննա Գրիգորյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ N 250**

*28 նոյեմբեր 2011թ.*

**ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 94/2 ՀԱՍՑԵԻ 167.0ՔՄ ԵՎ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 94/3 ՀԱՍՑԵԻ 190.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Արծրուն Անանյանը՝ Հակոբջանյան փողոցի թիվ 94/2 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան 400.0քմ տնամերձ հողամասին կից 357.0քմ ընդհանուր մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 357.0քմ ընդհանուր մակերեսով հողամասը բաղկացած է 2 գույքային միավորներից՝ 167.0քմ և 190.0քմ մակերեսներով: Հողամասերի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, նշված բնակելի տան սեփականատեր Արծրուն Անանյանին: Նշված հողամասերը չեն համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չեն գտնվում ինժեներա - տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում են «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան քաղաքի Հակոբջանյան փողոցի թիվ 94/2 հասցեի 400.0քմ հողամասն ընդլայնել 357.0քմ-ով /167.0քմ և 190.0քմ/, և վերջիններս ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 443394 դրամ ընդհանուր արժեքով օտարել քաղ. Արծրուն Անանյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 251

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ "ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ" 3226.9ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 8 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 22.4ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 24.11.2011թ. թիվ 677 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող "Բնակավայրերի հողերից" 3226.9քմ ընդհանուր մակերեսով թվով 8 հողամասերը աճուրդի և 22.4քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող "Բնակավայրերի հողերից" 3226.9քմ ընդհանուր մակերեսով թվով 8 հողամասերը աճուրդի և 22.4քմ մակերեսով հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Աղյուսակ.

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 43/ՔՀ-11/ | Շահումյան 27 | 217-068 | 100.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 250,000 | չկան |
| 2 | Լոտ 44/ՔՀ-11/ | Օրջոնիկիձե V նրբ. 4/3 | 287-016 | 46.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | բարեկարգման | 115,000 | չկան |
| 3 | Լոտ 45/ՔՀ-11/ | Կամո 1/3 | 324-007 | 120.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 300,000 | չկան |
| 4 | Լոտ 46/ՔՀ-11/ | Կամո 1/6 | 323-005 | 1,040.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 2,600,000 | չկան |
| 5 | Լոտ 47/ՔՀ-11/ | Կամո 18/2 | 328-002 | 375.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | անհատական բնակելի տան կառուցման | 937,500 | չկան |
| 6 | Լոտ 48/ՔՀ-11/ | Այգեստան 17/2 | 053-402 | 21.9 | Բնակավայրերի հող | այլ հողեր | ավտոտնակի կառուցման | 54,750 | չկան |
| 7 | Լոտ 49/ՔՀ-11/ | Սարալանջի VI նրբ. 3/1 | 053-400 | 843.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 2,107,500 | չկան |
| 8 | Լոտ 50/ՔՀ-11/ | Սարալանջի VI նրբ. 3/2 | 053-401 | 681.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 1,702,500 | չկան |
| 9 | Լոտ 9/ՔՀ-11/ *կրկնաճուրդ* | Կալինինի 243/16 | 141-050 | 22.4 | Բնակավայրերի հող | այլ հողեր | ավտոտնակի կառուցման | 56,000 | չկան |

*Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա Մարտիրոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 252

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ "ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ" 584.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 24.11.2011թ. թիվ 676 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող "Բնակավայրերի հողերից" 584.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլատվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և մեկնարկային գնով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող "Բնակավայրերի հողերից" 584.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրել և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Աղյուսակ.

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 5/ՔԿ-11/ | Թբիլիսյան խճուղի 34 | 687-015 | 584.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 40 տարի | 23360 դրամ | չկան |

*Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա.Մարտիրոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 253

*28 նոյեմբեր 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Դիլիջանի «Հույսի կամուրջ» Հասարակական Կազմակերպության և Դիլիջանի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկություններ հաճախող թվով 566 երեխաների համար ձեռք բերել ամանորյա նվերներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և երեխաների համար ամանորյա նվերների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասից «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» /բաժին 09 խումբ 06 դաս 01 հոդված 4269/ հատկացնել 849000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ